ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԿԳՄՄՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ »ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱՆ՝ Ուշադրության բարձրացումը խաղերի միջոցով

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ Վարդենիս

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հասմիկ Բեյբության

ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ՝ Սաթենիկ Սահակյան

ԴՊՐՈՑ՝ Լուսակունքի միջնակարգ դպրոց

2023թ.

ՎԱՐԴԵՆԻՍ

Բովանդակություն

Ներածություն_____3
Գրական ակնարկ_____5
Փորձարարական հետազոտություն_____6
Խմբի նկարագիր_____7
Հետազոտության ընթացք_____7
Փորձարարական դաս 1_____11
Փորձարարական դաս 2_____13
Տվյալների մշակում և վերլուծություն_____14
Եզրակացություն_____15
Օգրագործված գրականության ցանկ_____16
Հավելված
Դասապլան 1
Դասապլան 2

Ներածություն

Ուշադրությունն այնպիսի գործընթաց է, որում կան ինչպես իմացական, այնպես էլ հուզակամային բաղադրիչներ: Հենց մի կողմից օբյեկտների հուզակամային նկարագիրը շատ հաճախ ուշադրություն է գրավում, ընդ որում, երբեմն առանց մեր ցանկության: Մյուս կողմից, եթե մարդը սկսի շատ ուշադրություն դարձնել հուզական-անձնական խնդիրներին, դա կդժվարացնի նրա առօրյա կյանքը: Ուշադրությունը պահանջում է նաև կամային ջանքեր՝ ուղեկցվելով յուրահատուկ հուզական ապրումներով:

Ուշադրության առաջացման հիմքում ընկած է նյարդային գործընթացների ակտիվացումը, որոնք նպաստում են արթուն մի վիճակից անցնելու ավելի բարձր վիճակի:

Ուշադրության կենտրոնացումը և պահպանումը կարևոր հմտություններ են, որ թույլ են տալիս արդյունավետորեն սովորել և աշխատել: Մեր ուղեղը հակված է բազմախնդիր լուծումների, այսինքն փորձում է աշխատել միաժամանակ տարբեր խնդիրների վրա : Հաճախ ուշադրությունը կորում է հետադարձ կապի բացակայության պատճառով: Բնականաբար, մեր ուղեղին պետք է համոզվել՝ արդյո՞ք հաջողվեց խնդրի լուծումը: Փորձենք վերլուծել և համոզվել, որ մեր աշխատանքը տալիս է արդյունք: Եթե մենք հստակ չափում ենք այդ արդյունքը և հետևում, թե ինչ ստացվեց, կարող ենք եզրակացնել, որ հաջողության հասանք:Օրինակ՝ :

- Ես հաշվում եմ՝ օրական քանի ժիմ եմ արել, և զգում եմ, թե ինչքան ուժեղեմ դարձել:
- Երբ ես սկսեցի հետևել, թե քանի էջ եմ կարդացել օրվա ընթացքում, եսկարողացա կարդալ ավելի շատ գրքեր:

Եվ ամենակարևորը՝ այն խնդիրը, որին դու հետևել ես, մնացել է քո ուշադրության կենտրոնում:

Ցավոք, հաճախ մենք խուսափում ենք արդյունք չափելուց, քանի որ վախենում

ենք հիասթափվել: Սակայն սա ճիշտ մոտեցում չէ, քանի որ գնահատելի էնան գործի առաջընթացը:

Ուշադրության դրսևորումը համարվում է հետազոտական վարքի, օրգանիզմի հարմարվողական ճանաչողական գործունեության սկիզբը, տեղեկատվության ընտրությունը:

Ուշադրության կայունության ուսումնասիրումը նպատակ ունի պարզելու.

.ինչքան կայուն և հաստատուն է պահպանվում ուշադրությունը որոշակի խնդրիլուծման համար երկարատև ժամանակահատվածի ընթացքում:

Գրական ակնարկ

Յուրաքանչյուր անձի ծննդյան ժամանակ դրվում է կամավոր ուշադրության սկզբունքը Իվան Պավլովի կողմից. որոշակիորեն բացատրվում է ուշադրությունն ապահովող ֆիզոլոգիական գործընթացների դինամիկան։

Ինչպես նշում է Ուիլյամ Ջեյմսը, ուշադրության էությունը բանականության այս կամայն օբյեկտի տիրապետումն է կամ մտքերի ուղղվածությունը, գիտակցության կենտրոնացումը : Այն պահանջում է այլ առարկաներից հեռացում
մյուսների հետ առավել արդյունավետ փոխազդելու համար։ Ստացվում է, որ ուշադրության առաջին գործառույթը որոշակի տպավորությունների, մտքերի կամ առարկաների վրա ֆոկուսավորումն է և շեղումն այլ՝ տվյալ պահին ոչ պետքական մտքերից, առարկաներից։ Այսինքն՝ իմացական գործընթացը, որում ներառված է ուշադրությունը, բնորոշվում է ընտրողականությամբ, իսկ ուշադրությունը ընտրելու գործառույթով։ Ընտրությունն ունի երկու կողմ. դրական կողմն ընտրելն է այն, ինչն անհրաժեշտ է գործունեության նպատակին հասնելու համար, իսկ բացասական կողմը՝ այն ավելորդ հեռացնելն է, ինչը կարող է խանգարել անհրաժեշտի ընկալմանը։
Երկրորդ՝ ուշադրությունը կապված է գիտակցության կենտրոնացման՝ ճանաչողության օբյեկտի վրա կենտրոնանալու հետ, որը մենք կարող ենք պահել գիտակցության մեջ որոշակի ժամանակահատված։ Այստեղուշադրությունն իրականացնում է որոշակի տպավորությունների և մտքերի
պահման ֆունկցիա։ Ուշադրության պահպանումն ուղեկցվում է ջանքերիսուբյեկտիվ ապրումով։
Աշակերտների ուշադրությունը զարգացնելու նպատակով կարելի է կիրառելխաղերի առկայությունը։ Որի յուրահատկությունն այն է,որ հետազոտողը
նախօրոք որոշում է խաղի տեսակը և հիմնական քայլաշարը ,որոնց պատասխանները նա ցանկանում է ստանալ,աշակերտների մտածողության և բունխաղի ընկալունակության շնորհիվ։
Ուշադրության կենտրոնացվածությունից է կախված տեսածն ու լսածը մտապահելուիրենց կարողությունը և ուշադրության զարգացման նպատակաուղղվածությունը։

Փորձարարական հետազոտություն

Հետազոտական աշխատանքի ընթացքում կարևորում եմ ուսումնական աշխատանքի հանդեպ աշակերտների անձնային վերաբերմունքը , ինքնադրսևորման մակարդակը,խմբում աշխատելու կարողություններն ու պատասխանատվությունը,որի ժամանակ յուրաքանչյուր աշակերտ կդառնա նախաձեռնող և ինքնուրույն:Փորձում եմ նրանց դարձնել գործընթացի ակտիվմասնակիցներ: Հաշվի առնելով այն հանգամանքը որ նախորդ տարիներին աշակերտները ձեռք են բերել ծրագրով նախատեսված որոշակի գիտելիքներ և զարգացրել են շատ կարողություններ,ունեն կարծիք արտահայտելու ձգտում:Կարողանում են առաջադրել հարցեր և կողմնորոշվում են հարցերի պատասխանները ձևակերպելիս:

Մինչև հետազոտության սկսելը , ես մտածում եմ.

1. Ստեղծել դասի պլանը:
2. Ընդգրկել աշակերտներին դասապրոցեսում:
3. Անցկացնել զրույց:(նախապատրաստել)
4. 4.Մշակել նյութին համապատասխան հարցեր:
5. Անցկացնել քննարկումներ դասի մասնակից աշակերտների հետ:
6. Բացահայտել դասի պլանի հաջողված և չհաջողված կողմերը:
7. Կատարելագործել դասի պլանը:
8. Ձևակերպել եզրակացություններ և առաջարկություններ:

<< Իմ դասավանդման գործընթացում ինչը՞ (կամ ինչերը՞) կարիք ունիփոփոխության և ինչու՞>>:

Մասնակից դարձնել բոլոր աշակերտներին,ծանոթացնել խաղի ընթացքին ու անցկացմանը,նրանց դարձնելով տվյալ խաղի մասնակիցը:Ուշադրություն բևեռել մասնակցության դրսևորման կարևորությանը:Դիտակետում պահել աշակերտներին ,նրանց դարձնելով ակտիվիստներ:

Խմբի նկարագիր

Հետազոտության օբյեկտի ընտրություն-Հետազոտման ընթացքում առկա խնդրիլուծման համար կարևորում եմ այն օբյեկտը,խումբը որը պետք է դիտարկվի:
Հետազոտական աշխատանքս իրականացրել եմ Լուսակունքի միջն. դպրոցի 2-րդ դասարանում:Դասարանում սովորում են 19 աշակերտ,որոնցից 11-ը տղաներ են, իսկ 8-ը աղջիկներ:Դասարանը շատ պատրաստակամ է սովորելու տեսանկյունից,չնայած լինում են աշակերտներ, որոնք ծուլանում են դասապրոցեսի ընթացքում:

Հետազոտության ընթացք

Այս փուլում որոշում եմ հետազոտության տիպը, ելնելով տարբերչափանիշներից:
Ընտրում եմ հետազոտության տիպը
Բնական --Փորձարկումն ընթանում է մանկավարժական բնականոն գործընթացի սահմաններում:
Տարանջատում եմ խաղի բաղկացուցիչ մասերը ըստ փուլերի,ծանոթացնում եմ աշակերտներին,սևեռում եմ նրանց ուշադրությունը,խաղն հասկանալու և ճիշտ կատարելու վարման գործընթացին:
Խնդրի տեսական վերլուծություն-

Բացահայտում եմ աշակերտների ուժեղ և թույլ կողմերը,հենվելով նրանց կարողունակության վրա,առաջացնում եմ աշխուժություն,ապահովելով շարժողունակությունը,ըստ որի խաղի միջոցով զարգացնում եմ նրանց հետաքրքրությունն ու ուշադրությունը:
Ի՞նչ եմ դիտարկելու

Դիտարկելու եմ նախատեսված խաղի ընթացքում յուրաքանչյուր աշակերտի,ներառելով խաղի բովանդակության ընթացքի մեջ,նրանց մղելովնպատակաուղղվածության ձգտման արդյունքի բարելավմանը:
Տալիս ենք ուղղորդող հարց:
Ինչ՞ է խաղը:

Սահմանում եմ խաղի քննարկման ժամանակը, կախված խաղի Բովանդակությունից մինչև քսան րոպե և նույնիսկ ավելի երկար:
Բաժանում եմ երեխաներին 4-5 հոգանոց խմբերի,ծանոթացնում խաղի քայլաշարին և կանոններին:Ըստ ուշադրության կենտրոնացվածության և հիշողության մտապահման աշակերտները խաղին տիրապետում են պասիվ և ակտիվ ձևով,որը բխեցվում է նրանց հնարավորության և կողմնորոշվածությանհանգամանքից:
Խաղ «Ես հիշում եմ ամեն ինչ»
Խաղը կատարյալ է զույգի կամ փոքր խմբի դասերի համար *(4-5* հոգի*):*

Խաղը ոչ հոգնած երեխաներ դարձնելու համար օգտագործենք մեկ թեմայի բառերը,մրգեր, բանջարեղեն, քաղաքներ, երկրներ*:*
Խաղի գործընթացը այսպիսին է. «Գազար», - ասում է առաջին խաղացողը*:* «Գազար, բողկ», - ասում է եւս մեկը*:* «Գազար, բողկ, լոլիկ ...»
Երեխա շփոթված է հաջորդականությամբ կամ մոռացված բառով, դուրս գալովխաղից*:*
Հաղթողը խաղացող է, ով չի թույլ տվել մեկ սխալ*:*
Խաղի մրցակցային բնույթը մոտիվացնում է երեխաներին, ստիպելով նրանց մասնակցել հետաքրքրությամբ եւ մարզել նրանց հիշողությունը եւ ուշադրությունը*:*

Ինչու՞ եմ դիտարկելու

Դիտարկելու եմ համոզվելու համար,որքանով են դիտարկվողները կարողանում խաղալ ինքնուրույն,ցուցաբերել իրենց ճկունությունն ու ակտիվությունը:
Խաղի ընթացքում պարտվողները դուրս են մնում խաղից,իսկ հաղթողները խրախուսվում են:
Վերջացնելուց հետո անցկացնում եմ քննարկում խաղի հեշտ և դժվար կողմերի հաղթահարման շուրջ:
Ձևակերպում եմ այն հարցերը, որոնց պատասխաններն ակնկալում եմստանալ

հետազոտության վերջնարդյունքում:

Ինչ՞ը դուր եկավ և ինչո՞ւ դուր եկավ խաղը ձեզ:
Որն՞ է խաղի ուժեղ կողմը:

Ե՞րբ եմ փորձարկելու և ի՞նչ տևողությամբ

Դիտարկումը կատարում եմ միայն մեկ անգամ:

Ինչպիսի՞ տվյալներ եմ հավաքագրելու:

Ամփոփելով խաղը և ամեն մի աշակերտի մասնակցությունը խաղին,ելնելով նրանց հանդես գալու իրավիճակից գրառում եմ մասնակցության վերաբերյալ տեղեկություններ՝դրական կամ բացասական:

Գնահատում եմ համակարգի սկզբնական վիճակը

Հավաքագրում եմ նախնական տվյալներ (անամնեզ) առաջադրվածմանկավարժական խնդրի առաջացման հնարավոր պատճառների որոշակիացման համար:

Հավաքագրում եմ վկայություններ (ելնելով հետազոտությանհամատեքստից)

Ուսուցչի տեսանկյունից-Կապված նյութի բովանդակության հետ ըստ նպատակների գործընթացի իրացման կատարողականության ապահովմանհամար հավաքագրում եմ այնպիսի վկայություններ,որոնք կդառնան

աշակերտների առկա գործելաոճի հիմնաքարը;

<u>Ի՞նչ մեթոդներ եմ կիրառելու</u> - Որոշում եմ, թե ի՞նչ մեթոդներ եմ կիրառելուհետազոտության տարբեր փուլերում:

Զրույց,հարցազրույցՔառաբաժան

Կարճ նկարագրում եմ մեթոդը-Մեթոդական հնար է,որը հարմար է տեքստիհետ աշխատելիս:Այն կարելի է կիրառել փոքր խմբերով կամ անհատական աշխատանք կատարելիս:Գրատախտակը բաժանում եմ չորս մասի,յուրաքանչյուրում գրելով չորս բաժինների անունները:

Դրանք պատահական չեն ընտրված,համապատասխանում են խաղի ընկալման և ուշադրության զարգացման ընթացքին:

Ի՞նչ տեսա Ի՞նչ լսեցի

Ի՞նչ զգացի Ի՞նչ հասկացա

Այս փուլում նախապատրաստում եմ փաստաթղթեր և

Սարքավորումներ-Համացանցից

- Փորձարկման իրականացում, տվյալների հավաքագրում- Գրանցում
- **Կատարում եմ եզրակացություն**- Այս փուլում
- վերլուծում եմ փորձարկման արդյունքները :
- **Ակնկալում եմ** որ արդյունքների հաջողված կողմը կարող եմ ապահովելըստ
- նպատակների
- կատարման հաջորդականության:
- Կատարում եմ եզրակացություն, թե որքանո՞վ դասը ծառայեց նպատակին:

Պատասխանում եմ հետազոտության սկզբում իմ կողմիցառաջադրված

հարցերին:

Հետազոտության սկզբում իմ կողմից առաջադրված հարցերը փորձում եմ դարձնել հասանելի աշակերտների համար:

Փորձարարական դաս 1

Իմ փորձարարական առաջին դասի թեման՝ <<Ծեր պապն ու թոռը>>պատմվացքն է:

Դասի նպատակները-Կկարդան պատմվածքը տրամաբանական հաջորդականությամբ:

2.Կդրսևորեն վերաբերմունք տեքստում նկարագրվող դեպքերի վերաբերյալ:

3.Կդիտարկեն հերոսների վարքագիծը ուշադրության կենտրոնացվածությամբ:

4.Կգնահատեն հերոսների արարքները կիրառելով հատկանշական ցույց տվող բառերով:

Դասից ակնկալվող արդյունք-Նյութի բովանդակությունը հասկանալով կարտահայտեն մտքեր հերոսների վարքագծի բնութագրմամբ:

Օգտագործել եմ հետևյալ մեթոդները -զրույց,քառաբաժան

Դասը սկսել եմ զրույցի միջոցով:

Իմ վերաբերմունքն ինչպիսին՞ կարող է լինել տատիկի ու պապիկի նկատմամբ:

Հնչեցին մտքեր և կարծիքներ:Քննարկեցինք դասը պատասխանեցին հարցերին:

Ֆիզկուլտ դադար

Կատարեցինք բովանդակության քայլաշարի նկարագրություն հարցադրմամբ:

Ընթերցեցինք պատմվացքը,այնուհետև տվեցի հետևյալ հարցերը՝

1.Ինչպե՞ս կնկարագրեք պապիկին:

2.Ինչպիսի՞ն է տղայի և հարսի վերաբերմունքը:

3.Նկարագրեք հոր և տղայի երկխոսությունը:

4.Ինչու՞ էին լաց լինում ծնողները:

5.Ո՞րն էր դրա դրդապատճառը:

6.Ի՞նչու զայրացավ հարսը:

7.Ի՞նչ վերաբերմունք ցուցաբերեց թոռնիկը:

8.Արդյո՞ք այդ մոտեցումը ճիշտ էր:

Տվեցի բառերի բացատրությունը -կավե աման,փայտե տաշտ,հառաչեց:

Անցնելով առաջ հանձնարարեցի բնութագրել հերոսներին կիրառելով հատկանիշ ցույց տվող բառերը:



Քառաբաժան մեթոդի օգնությամբ պատասխանեցինք հարցերին- <<Քառաբաժան>>:

Ի՞նչ տեսա	Ի՞նչ լսեցի
Ի՞նչ զգացի	Ի՞նչ հասկացա

Հանձարարեցի տնային առաջադրանք՝ Դասագրքի վարժություններից 2-րդը և 4-րդը:

Փորձարարական դաս 2

Փորձարարական երկրորդ դասս անցած դասի շարունակությունն էր:

Այս դասիս նպատակներն են՝

1.Կշարադրեն բանավոր իրենց մտքերը,կհիմնավորեն դրանցտեքստի բովանդակության հիման վրա:

2. Կլսեն դիմացինի խոսքը,կբանավիճեն տեքստի բովանդակության շուրջ:

3. Կնկալեն խաղի բովանդակությունն ու ճիշտ քայլաշարը:

Ակնկալվող արդյունքները՝

Ակնկալում եմ ուշադրության կենտրոնացում,որպեսզիկարողանան խաղալ խաղի ճիշտ քայլաշարով:

Դասը սկսեցի բովանդակության շուրջ վերլուծությամբ

Աշակերտներին ուղղեցի հարցեր:

1.Ովքե՞ր էին տեքստի հերոսները:

2.Ինչու՞ պապիկին հացի սեղանին չէին նստեցնում:

3.Ի՞նչ էր շինում թոռնիկը:

4.Ինչու՞ էր թոռնիկը տախտակ շինում:

Անդրադարձ կատարեցինք խաղի միջոցով:

Խաղ—

Հարցերի առաջադրում Ի՞նչ

սովորեցի……

Ի՞նչ հասկացա……

Ի՞նչ մտածեցի……..

Տվյալների մշակում և վերլուծություն





Եզրակացություն

Այսպիսով հանգում եմ այն եզրահանգման,որ ուշադրության կենտրոնացվածությունից է կախված աշակերտների տեսածն ու լսածը,մտապահելու իրենց կարողությունը և ուշադրության զարգացման
նպատակաուղղվածությունը : Պետք է հաշվի առնել այն փաստը, որ միայն կանոնավոր դասերով հնարավոր կլինի հասնել ցանկալի արդյունքի և երեխային սովորեցնել սեփական ուշադրությունը կենտրոնացնել մեկ կամ մեկ այլ դասի վրա։ Նրանց ուշադրությունը ավելի երկարատև և կայուն կարող է լինել խթանող խաղերի միջոցով,որի ժամանակ աշակերտները դառնում են տվյալ խաղի խաղացողը:Հետազոտական աշխատանքի շնորհիվ բացահայտվեցին աշակերտների ակտիվ և պասիվ ,ուժեղ և թույլ կողմերը խաղի ընթացում:Նրանք դարձան ակտիվիստներ և խաղի մասնակիցներ,որը շատ ոգևորեց ամբողջ դասապրոցեսի ընթացքը:Մասնակից դարձան թվով19 աշակերտներ, կարողացան ուշադրության կենտրոնում պահելով համատեղել օրվա դասի թեման և ուշադրությունը զարգացնողխաղը:Ամփոփելով խաղը և ամեն մի աշակերտի մասնակցությունը խաղին, ելնելով նրանց հանդես գալու իրավիճակից հանգում եմ այն եզրահանգման,որ խաղերում արտացոլվում են երեխաների տպավորություններն ու պատկերացումներնարտաքին աշխարհի հանդեպ, դրսևորվում են նախասիրություններն ու հետաքրքրությունները, զարգանում է նրանց երևակայությունը:
Կարող ենք ասել իմացական գործընթացը, որում ներառված է ուշադրությունը, բնորոշվում է ընտրողականությամբ, իսկ ուշադրությունը ընտրելու գործառույթով և գալ այն եզրահանգման,որ հետազոտական աշխատանքը տվեց իր արդյունքը:

Օգտագործված գրականություն

1.Ղույումչյան Գ.Ե., «Մանկավարժություն», գիրք 1-ին, էջ 14, Եր., 2005

2.Ամիրջանյան Յու.Ա., Սահակյան Ա.Ս., Մանկավարժություն, Եր., 2005:

3.Հ.Մ.Մախչանյան-Մանկավարժական պատմություն,Երևան,1991

8. Վարդումյան Ս., Հարությունյան Լ., Ջաղինյան Ն., Վարելլա Գ., Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Տեսություններ, մեթոդներ, գնահատում: Ձեռնարկ մանկավարժների և կրթության կազմակերպիչների համար, Երևան, «Նոյան տապան», 2005:

ԴԱՍԱՊԼԱՆ 1
Ուսուցչուհի՝ Սաթենիկ Սահակյան

Առարկա՝	Մայրենի	Ամսաթիվ	06.04.2023 թ.	Կիսամյակ	II	Դասարան	2-րդ
Թեմա՝	<<Ծեր պապն ու թոռը>>-պատմվածքը						
Օգտագործվող նյութեր	Դասագիրք,բառատետր,գրիչ,կպչուն թուղթ						
Դասի նպատակը՝	Կկարդան պատմվածքը տրամաբանական հաջորդականությամբ: 2.Կդրսևորեն վերաբերմունք տեքստում նկարագրվող դեպքերի վերաբերյալ: 3.Կդիտարկեն հերոսների վարքագիծը ուշադրության կենտրոնացվածությամբ: 4.Կգնահատեն հերոսների արարքները կիրառելով հատկանշական ցույց տվող բառերով						

Ուսուցմանփաստեր,որոնքկփաստեն,որուսուցումըտեղիունեցավ

Վերջնարդյունքները	Նյութի բովանդակությունը հասկանալով կարտահայտեն մտքեր հերոսների վարքագծի բնութագրմամբ:

Գործողություններ Ժամ/տևողություն	Դասիփուլերը	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ Աշակերտ	Կիրառվող մեթոդներ
5-10ր 15-20ր 7-10ր	Սկիզբ Ընթացք Ավարտ	Բարևում է աշակերտների և կատարում հաշվառում: Անցում բուն դասի ընթացքին: Զրույց Իմ վերաբերմունքն ինչպիսին՞ կարող է լինել տատիկի ու պապիկի նկատմամբ: Կհնչեն մտքեր,կարծիքներ: Ֆիզկուլտ դադար Իմաստի ընկալում-Բովանդակության քայլաշարի նկարագրություն հարցադրմամբ: Ընթերցելուց հետո: Բառերի բացատրություն-կավե աման,փայտե տաշտ,հառաչեց: Բնութագրել հերոսներին կիրառելով հատկանիշ ցույց տվող բառերը:	Զրույց, Հարցադրումների մեթոդ

		Կշռադատում- Անդրադարձ<<Քառաբաժան>>:	
Գնահատում Տնային աշխատանք 3-5ր		Միավորային Կատարել դասի վերջին 2-րդ և 4-րդ առաջադրանքները:	

ԴԱՍԱՊԼԱՆ 1
Ուսուցչուհի՝ Սաթենիկ Սահակյան

Առարկա՝	Մայրենի	Ամսաթիվ	07.04.2023 թ.	Կիսամյակ	II	Դասարան	2-րդ
Թեմա՝	<<Ծեր պապն ու թոռը>>-պատմվացքը- դասի շարունակություն:						
Օգտագործվող նյութեր	Դասագիրք,բառատետր,գրիչ,կպչուն թուղթ						
Դասի նպատակը՝	1.Կշարադրեն բանավոր իրենց մտքերը,կհիմնավորեն դրանց տեքստի բովանդակության հիման վրա: 2.Կլսեն դիմացինի խոսքը,կբանավիճեն տեքստի բովանդակության շուրջ: 3. Կնկալեն խաղի բովանդակությունն ու ճիշտ քայլաշարը:						

Ուսուցմանփաստեր,որոնքկփաստեն,որուսուցումըտեղիունեցավ

Վերջնարդյունքները	Ակնկալում եմ ուշադրության կենտրոնացում,որպեսզի կարողանան խաղալ խաղի ճիշտ քայլաշարով:

Գործողություններ Ժամ/տևողություն	Դասիփուլերը	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ Աշակերտ	Կիրառվող մեթոդներ
5-10ր 15-20ր 7-10ր	Սկիզբ Ընթացք Ավարտ	Բարևում է աշակերտների և կատարում հաշվառում: -Բովանդակության վերլուծություն հարցերով: 1.Ովքե՞ր էին տեքստի հերոսները: 2.Ինչու՞ պապիկին հացի սեղանին չէին նստեցնում: 3.Ի՞նչ էր շինում թոռնիկը: 4.Ինչու՞ էր թոռնիկը տախտակ շինում: Կշռադատում-Անդրադարձ խաղի միջոցով: Խաղ— Հարցերի առաջադրում Ի՞նչ սովորեցի…… Ի՞նչ հասկացա…… Ի՞նչ մտածեցի……..	Զրույց, Հարցադրումների մեթոդ

Գնահատում Տնային աշխատանք 3-5ր		Միավորային Կատարել դասի վերջին 1-ին և 3-րդ առաջադրանքները:	